ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ

ք. Երևան «24» 05 2018թ.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2981000 (երկու միլիոն ինը հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ Աժ աշխատակազմ	«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	ք. Երևան, Անտառային փ. 120տ.
ՀՎՀՀ 00008519	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 16076012101400
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ 00125777
ՀՀ Աժ աշխատակազմի	էլ. հասցեն՝ retro.feelings@mail.ru
ղեկավարի առաջին տեղակալ	Ա. Գրիգորյան
Գ. Մխեյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«07» 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը*
13	30237340/14	Քարթրիջներ 50F5H00	Lexmark Չինաստան	Lexmark MS310dn տպիչի համար տոներ - քարթրիջ 502H տեսակի, տարածաշրջանը - 1(USA), Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն:	հատ	39000	234000	6	ՀՀ ԱԺ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	6	II-րդ եռ. 4 հատ III-րդ եռ. 2 հատ
17	30237340/18	Քարթրիջներ 106R02183	NV-Print Չինաստան	Տոներային քարթրիջ 106R02183 տեսակի Xerox Phaser 3010 տպիչի համար, Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն, Պահպանման	հատ	13887.5	1111000	80		80	II եռամսյակ

				երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
19	30211160/2	Կենտրոնական պրոցեսորներ (cpu) կամ պրոցեսորներ Intel Core i7-7700K	Intel Չինաստան	Համակարգչի պրոցեսոր, Intel Core i7-7700K 4.2 GHz Quad-Core LGA 1151 Processor	հատ	182000	364000	2		2	II եռամսյակ
23	30232280/4	Կոշտ սկավառակների դրայվերներ 432320-001	HP Չինաստան	Կուտակիչ HDD IBM սերվերների համար 146GB 3G SAS 10K SFF SP HDD	հատ	72000	288000	4		4	II եռամսյակ
25	30232280/6	Կոշտ սկավառակների դրայվերներ 3D NAND 500GB PC SSD	WD Blue Մալազիա	Կուտակիչ SSD տեսակի mSata ինտերֆեյսով, ծավալը - 0.5Tb, չափը - 2.5"	հատ	110000	220000	2		2	II եռամսյակ
27	30236120/1	Դինամիկ օպերատիվ հիշողություն Kingston DDR2	Kingston Չինաստան	Համակարգչի հիշողություն DDRAM 2 տեսակի, 2 Գգբ, 800Մգբ/վրկ	հատ	10000	80000	8		8	II եռամսյակ
33	30237140/2	Մայրական պլատաներ 50V2	Shuttle Չինաստան	Մայրական սալիկ Shuttle 50V2 համակարգչի համար	հատ	125000	125000	1		1	II եռամսյակ
35	30237100/1	Համակարգիչների մասեր	Intel Չինաստան	Հովհար Intel LGA 1155 socket պրոցեսորի համար,աղմուկը - 25-28 Db/A	հատ	4666.67	28000	6		6	II եռամսյակ

		LGA 1155 sochet									
36	30237200/1	Համակար գիչների պարագան եր LGA 1151 sochet	Intel Չինաստան	Հովհար Intel I3,I5,I7 1151 socket պրոցեսորի համար,աղմուկը - 15-20 Db/A	հատ	5000	30000	6		6	II եռամսյակ
37	30237200/2	Համակար գիչների պարագան եր 781	TP Link Չինաստան	WI FI LAN Card,Վայ - Ֆայ ցանցային քարտ USB ինտերֆեյսով, 802,11a/b/g/n տեսակի, 2,4/5 Գg.	հատ	5600	28000	5		5	II եռամսյակ
41	30237112/1	Սնուցման բլոկ 650VA	LG Չինաստան	Սնուցման բլոկ ATX տեսակի,մուտքի լարումը 220Վ, հզորությունը 650 VA, աղմուկը 14-16դբ, 3 HDD միացնելու հնարավորություն, VGA սնուցման 6/8 pin կոննեկտոր	հատ	16000	80000	5		5	II եռամսյակ
43	30237112/3	Սնուցման բլոկ For 4750	Adapter Չինաստան	Սնուցման բլոկ Acer Travelmate 4750 notebook համար 110/220V- 19V- 4.74A	հատ	12000	48000	4		4	II եռամսյակ
47	30234630/1	ֆլեշ հիշողություն 8 Gb Cruzer Blade	SanDisk Չինաստան	Ծավալը -8Gb, Ինտերֆեյսը - USB 2.0, աշխատանքային ջերմաստիճանը 0-40	հատ	4466.67	134000	30		30	II-րդ եռ. մինչև մայիսի 20-ը 15 հատ III-րդ եռ. 15 հատ
48	30234640/1	ֆլեշ հիշողություն 16 Gb Ultra CZ48	SanDisk Չինաստան	Ծավալը - 16Gb, ինտերֆեյսի տեսակը - USB3.0,	հատ	6533.33	98000	15		15	II-րդ եռ. մինչև մայիսի 20-ը 5 հատ III-րդ եռ. 10 հատ
49	30234650/1	ֆլեշ հիշողություն 32 Gb Ultra CZ48	SanDisk Չինաստան	Ծավալը - 32Gb, ինտերֆեյսի տեսակը - USB3.0	հատ	9800	98000	10		10	II-րդ եռ. մինչև մայիսի 20-ը 5 հատ III-րդ եռ. 5 հատ
50	30234400/1	դատարկ սկավառակ, առանց տուփի,	Etech Չինաստան	Տրամագիծը՝ 12սմ, ծավալը - 4.7 Gb, միակողմանի	հատ	150	15000	100		100	II-եռամսյակ, մինչև մայիսի 20-ը

		DVD 4.7 gb									

**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա սեպտեմբերի 30-ը: Ապրանքը պետք է ունենա որակի սերտիֆիկատ եթե կիրառելի է:*

**Բոլոր մատակարարվող ապրանքները պետք է ունենան համապատասխան արտադրող ընկերության կողմից տրված որակավորման փաստաթուղթ սերտիֆիկատ, երաշխավորված մեկ տարի պահպանման ժամկետ, իսկ քարթրիջները՝ նաև իսկությունը ստուգելու հնարավորություն և պաշտպանված հոլոգրաֆիկ պիտակ:*
Այն չափաբաժիններում, որոնց անվանումներում և տեխնիկական բնութագրերում առկա են հղումներ ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կիրառական է **«կամ համարժեք» արտահայտությունը:*
**Բոլոր քարթրիջները պետք է լինեն գործարանային փակ տուփերով և արտադրված ոչ վաղ քան 2017թ. 4-րդ եռամսյանկը և համապատասխանեն ISO / IEC ստանդարտներին:*
** Յուրաքանչյուր 3 քարթրիջից մեկը՝ պատվիրատուի կամայական ընտրությամբ, կարող է ենթարկվել փորձարկման՝ սույն տեխնիկական բնութագրին համապատասխանությունը ստուգելու համար: Քարթրիջի փորձարկումը պատվիրատուն իրավունք ունի իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փորձաքննության միջոցով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ Աժ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ Աժ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային փ. 120տ.
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16076012101400
ՀՎՀՀ 00125777
էլ. հասցեն՝ retro.feelings@mail.ru
Ա. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«07» 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
13	30237340/14	Քարթրիջներ	-	-	-	-	58500	58500	117000	117000	117000	234000	234000	234000	**234000**
17	30237340/18	Քարթրիջներ	-	-	-	-	277750	277750	555500	555500	555500	1111000	1111000	1111000	**1111000**
19	30211160/2	Կենտրոնական պրոցեսորներ (cpu) կամ պրոցեսորներ	-	-	-	-	91000	91000	182000	182000	182000	364000	364000	364000	**364000**
23	30232280/4	Կոշտ սկավառակների դրայվերներ	-	-	-	-	72000	72000	144000	144000	144000	288000	288000	288000	**288000**
25	30232280/6	Կոշտ սկավառակների դրայվերներ	-	-	-	-	55000	55000	110000	110000	110000	220000	220000	220000	**220000**

27	30236120/1	Դինամիկ օպերատիվ հիշողություն	-	-	-	-	20000	20000	40000	40000	40000	80000	80000	80000	**80000**
33	30237140/2	Մայրական պլատաներ	-	-	-	-	31250	31250	62500	62500	62500	125000	125000	125000	**125000**
35	30237100/1	Համակարգիչների մասեր	-	-	-	-	7000	7000	14000	14000	14000	28000	28000	28000	**28000**
36	30237200/1	Համակարգիչների պարագաներ	-	-	-	-	7500	7500	15000	15000	15000	30000	30000	30000	**30000**
37	30237200/2	Համակարգիչների պարագաներ	-	-	-	-	7000	7000	14000	14000	14000	28000	28000	28000	**28000**
41	30237112/1	Սնուցման բլոկ	-	-	-	-	20000	20000	40000	40000	40000	80000	80000	80000	**80000**
43	30237112/3	Սնուցման բլոկ	-	-	-	-	12000	12000	24000	24000	24000	48000	48000	48000	**48000**
47	30234630/1	ֆլեշ հիշողություն 8 Gb	-	-	-	-	33500	33500	67000	67000	67000	134000	134000	134000	**134000**
48	30234640/1	ֆլեշ հիշողություն 16 Gb	-	-	-	-	24500	24500	49000	49000	49000	98000	98000	98000	**98000**
49	30234650/1	ֆլեշ հիշողություն 32 Gb	-	-	-	-	24500	24500	49000	49000	49000	98000	98000	98000	**98000**
50	30234400/1	դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	-	-	-	-	3750	3750	7500	7500	7500	15000	15000	15000	**15000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ

ՀՀ Աժ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ Աժ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային փ. 120տ.
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16076012101400
ՀՎՀՀ 00125777
էլ. հասցեն՝ retro.feelings@mail.ru
Ա. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«07» 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 07 » 05 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
07.05.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք.Երևան «19» 05 **.2018թ.**

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ Գ. Մխեյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և «Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 07.05.2018թ. կնքված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 56-րդ կետի 4-րդ ենթակետը՝ Կողմերը որոշեցին երկարաձգել ապրանքների 2-րդ եռամսյակի մատակարարման ժամկետը մինչև հունիսի 3-ը ներառյալ, համաձայն՝ թիվ 1 և 2 հավելվածների:

1.2 Պայմանագրի N1 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N1 հավելվածի:

1.3 Պայմանագրի N2 Հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն N2 հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է 07.05.2018թ. կնքված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ ծածկագրով պետական գնման պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 10 էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական

օրինակ: Համաձայնագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	ք. Երևան, Անտառային փ. 120տ.
ՀՎՀՀ 00008519	ՀՎՀՀ 00125777
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011020089	Հ/Հ 16076012101400
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Տնօրեն՝
ղեկավարի առաջին տեղակալ	Ա. Գրիգորյան
Գ. Մխեյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 1
07 մայիսի 2018 թ. կնքված
N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ պայմանագրի
« 19 » « 05 » 2018 թ. կնքված N1 համաձայնագիր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը*
13	30237340/14	Քարթրիջներ 50F5H00	Lexmark Չինաստան	Lexmark MS310dn տպիչի համար տոներ - քարթրիջ 502H տեսակի, տարածաշրջանը - 1(USA), Պարտադիր պայմաններ՝ քարտրիջը պետք է ամբողջովին և հերմետիկ տեղադրված լինի գործարանային օդային բարձիկի մեջ /airback/: Գործարանային տուփում քարտրիջի գործարանային անձնագրի առկայություն: Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն:	հատ	39000	234000	6	ՀՀ ԱԺ գ. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	6	II-րդ եռ. 4 հատ III-րդ եռ. 2 հատ
17	30237340/18	Քարթրիջն	NV-Print	Տոներային քարթրիջ 106R02183 տեսակի Xerox Phaser 3010 տպիչի	հատ	13887.5	1111000	80		80	II եռամսյակ

		եր 106R02183	Չինաստան	համար, Տուփի վրա պետք է դաջված լինի քարտրիջի գործարանային արտադրման ամսաթիվը: Քարտրիջի վրա հոլոգրաֆիկ նշանի՝ պիտակի առկայություն, Պահպանման երաշխիքային ժամկետ՝ 1 տարի:							
19	30211160/2	Կենտրոնական պրոցեսորներ (cpu) կամ պրոցեսորներ Intel Core i7-7700K	Intel Չինաստան	Համակարգչի պրոցեսսոր, Intel Core i7-7700K 4.2 GHz Quad-Core LGA 1151 Processor	հատ	182000	364000	2	ՀՀ Աժ գ. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	2	II եռամսյակ
23	30232280/4	Կոշտ սկավառակների դրայվերներ 432320-001	HP Չինաստան	Կուտակիչ HDD IBM սերվերների համար 146GB 3G SAS 10K SFF SP HDD	հատ	72000	288000	4		4	II եռամսյակ
25	30232280/6	Կոշտ սկավառակների դրայվերներ 3D NAND 500GB PC	WD Blue Մալազիա	Կուտակիչ SSD տեսակի mSata ինտերֆեյսով, ծավալը - 0.5Tb, չափը - 2.5"	հատ	110000	220000	2		2	II եռամսյակ

		SSD									
27	30236120/1	Դինամիկ օպերատիվ հիշողություն Kingston DDR2	Kingston Չինաստան	Համակարգչի հիշողություն DDRAM 2 տեսակի, 2 Գգբ, 800Մգբ/վրկ	հատ	10000	80000	8	ՀՀ ԱԺ գ. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	8	II եռամսյակ
33	30237140/2	Մայրական պլատաներ 50V2	Shuttle Չինաստան	Մայրական սալիկ Shuttle 50V2 համակարգչի համար	հատ	125000	125000	1		1	II եռամսյակ
35	30237100/1	Համակարգիչների մասեր LGA 1155 sochet	Intel Չինաստան	Հովհար Intel LGA 1155 socket պրոցեսորի համար,աղմուկը - 25-28 Db/A	հատ	4666.67	28000	6		6	II եռամսյակ
36	30237200/1	Համակարգիչների պարագաներ LGA 1151 sochet	Intel Չինաստան	Հովհար Intel I3,I5,I7 1151 socket պրոցեսորի համար,աղմուկը - 15-20 Db/A	հատ	5000	30000	6		6	II եռամսյակ
37	30237200/2	Համակարգիչների պարագաներ 781	TP Link Չինաստան	WI FI LAN Card,Վայ - Ֆայ ցանցային քարտ USB ինտերֆեյսով, 802,11a/b/g/n տեսակի, 2,4/5 Գg.	հատ	5600	28000	5		5	II եռամսյակ

41	30237112/1	Սնուցման բլոկ 650VA	LG Չինաստան	Սնուցման բլոկ ATX տեսակի,մուտքի լարումը 220Վ, հզորությունը 650 VA, աղմուկը 14-16դբ, 3 HDD միացնելու հնարավորություն, VGA սնուցման 6/8 pin կոննեկտոր	հատ	16000	80000	5		5	II եռամսյակ
43	30237112/3	Սնուցման բլոկ For 4750	Adapter Չինաստան	Սնուցման բլոկ Acer Travelmate 4750 notebook համար 110/220V- 19V- 4.74A	հատ	12000	48000	4	ՀՀ ԱԺ ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19	4	II եռամսյակ
47	30234630/1	ֆլեշ հիշողություն 8 Gb Cruzer Blade	SanDisk Չինաստան	Ծավալը -8Gb, Ինտերֆեյսը - USB 2.0, աշխատանքային ջերմաստիճանը 0-40	հատ	4466.67	134000	30		30	II-րդ եռ. մինչև հունիսի 3-ը 15 հատ III-րդ եռ. 15 հատ
48	30234640/1	ֆլեշ հիշողություն 16 Gb Ultra CZ48	SanDisk Չինաստան	Ծավալը - 16Gb, ինտերֆեյսի տեսակը - USB3.0,	հատ	6533.33	98000	15		15	II-րդ եռ. մինչև հունիսի 3-ը 5 հատ III-րդ եռ. 10 հատ
49	30234650/1	ֆլեշ հիշողություն 32 Gb Ultra CZ48	SanDisk Չինաստան	Ծավալը - 32Gb, ինտերֆեյսի տեսակը - USB3.0	հատ	9800	98000	10		10	II-րդ եռ. մինչև հունիսի 3-ը 5 հատ III-րդ եռ. 5 հատ
50	30234400/1	դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD 4.7 gb	Etech Չինաստան	Տրամագիծը՝ 12սմ, ծավալը - 4.7 Gb, միակողմանի	հատ	150	15000	100		100	II-եռ, մինչև հունիսի 3-ը

Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 7 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից:Ապրանքը պետք է ունենա որակի սերտիֆիկատ եթե կիրառելի է:

**Բոլոր մատակարարվող ապրանքները պետք է ունենան համապատասխան արտադրող ընկերության կողմից տրված որակավորման փաստաթուղթ սերտիֆիկատ, երաշխավորված մեկ տարի պահպանման ժամկետ, իսկ քարթրիջները՝ նաև իսկությունը ստուգելու հնարավորություն և պաշտպանված հոլոգրաֆիկ պիտակ:*

**Բոլոր քարթրիջները պետք է լինեն գործարանային փակ տուփերով և արտադրված ոչ վաղ քան 2017թ. 4-րդ եռամսյանկը և համապատասխանեն ISO/IEC ստանդարտներին:*

** Յուրաքանչյուր 3 քարթրիջից մեկը՝ պատվիրատուի կամայական ընտրությամբ, կարող է ենթարկվել փորձարկման՝ սույն տեխնիկական բնութագրին համապատասխանությունը ստուգելու համար: Քարթրիջի փորձարկումը պատվիրատուն իրավունք ունի իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան փորձաքննության միջոցով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային փ. 120տ
ՀՎՀՀ 00125777
ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16076012101400
Տնօրեն՝
Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 2
07 մայիսի 2018 թ. կնքված
N ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-18/10 ՌԵՏ պայմանագրի
« 19 » « 05 » 2018 թ. կնքված N1 համաձայնագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
13	30237340/14	Քարթրիջներ	-	-	-	-	-	58500	117000	117000	117000	234000	234000	234000	**234000**
17	30237340/18	Քարթրիջներ	-	-	-	-	-	277750	555500	555500	555500	1111000	1111000	1111000	**1111000**
19	30211160/2	Կենտրոնական պրոցեսորներ (cpu) կամ պրոցեսորներ	-	-	-	-	-	91000	182000	182000	182000	364000	364000	364000	**364000**

23	30232280/4	Կոշտ սկավառակների դրայվերներ	-	-	-	-	-	72000	144000	144000	144000	288000	288000	288000	**288000**
25	30232280/6	Կոշտ սկավառակների դրայվերներ	-	-	-	-	-	55000	110000	110000	110000	220000	220000	220000	**220000**
27	30236120/1	Դինամիկ օպերատիվ հիշողություն	-	-	-	-	-	20000	40000	40000	40000	80000	80000	80000	**80000**
33	30237140/2	Մայրական պլատաներ	-	-	-	-	-	31250	62500	62500	62500	125000	125000	125000	**125000**
35	30237100/1	Համակարգիչներ ի մասեր	-	-	-	-	-	7000	14000	14000	14000	28000	28000	28000	**28000**
36	30237200/1	Համակարգիչներ ի պարագաներ	-	-	-	-	-	7500	15000	15000	15000	30000	30000	30000	**30000**
37	30237200/2	Համակարգիչներ ի պարագաներ	-	-	-	-	-	7000	14000	14000	14000	28000	28000	28000	**28000**
41	30237112/1	Սնուցման բլոկ	-	-	-	-	-	20000	40000	40000	40000	80000	80000	80000	**80000**
43	30237112/3	Սնուցման բլոկ	-	-	-	-	-	12000	24000	24000	24000	48000	48000	48000	**48000**
47	30234630/1	ֆլեշ հիշողություն 8 Gb	-	-	-	-	-	33500	67000	67000	67000	134000	134000	134000	**134000**

48	30234640/1	ֆլեշ հիշողություն 16 Gb	-	-	-	-	-	24500	49000	49000	49000	98000	98000	98000	**98000**
49	30234650/1	ֆլեշ հիշողություն 32 Gb	-	-	-	-	-	24500	49000	49000	49000	98000	98000	98000	**98000**
50	30234400/1	դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	-	-	-	-	-	3750	7500	7500	7500	15000	15000	15000	**15000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավարի առաջին տեղակալ
Գ. Մխեյան

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռետրո Ֆիլինգս» ՍՊԸ
ք. Երևան, Անտառային փ. 120տ
ՀՎՀՀ 00125777
ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ
Հ/Հ 16076012101400
Տնօրեն՝
Ա. Գրիգորյան

/ստորագրություն/

Կ.Տ